

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ընդունելության թեստը բաղկացած է 10 առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր (ընդամենը՝ 50 միավոր):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 60 րոպե:

ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. *Լրացնել բնագրում բաց թողած տառերը.*

Պատն__շ, ամրակո__, լացուկ__ծ, ճրագալույ__, վար__ուբարք, որ__կալ, խոտ__արք, ա__բասիր, գեր__արել, փաս__ն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. *Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.*

առոք (փառոք), ի (սրտե), վաթսուն (ութ), ձեռք (բերում), մուգ (կապույտ), դափ (դատարկ), ընդ (հույ), ըստ (երևույթին), տուն (թանգարան), գյուղից (գյուղ).

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. *Տրված արմատները միացնելով՝ կազմել 5 բառ.*

միրգ	տառ
վերք	տախտակ
մեծ	շուշան
հովիտ	բույժ
գիր	առատ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Առաջին շարքի նախածանցներով և երկրորդ շարքի համապատասխան բառերով կազմել ածանցավոր բառեր.

տ բայ

ստոր գետ
դեր կետ
չ գոհ
դժ կամ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Ընտրել և յուրաքանչյուր դարձվածքի դիմաց գրել համապատասխան իմաստը.

խելքը թոցնել	ապարդյուն խրատել
գլխին քարոզ կարդալ	շրջագայել
աշխարհ տեսնել	հիմարանալ
սարեր շուռ տալ	ուժասպառ լինել
հալից ընկնել	մեծ գործեր կատարել

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6.Առաջին շարքի արմատներով և երկրորդ շարքի համապատասխան վերջածանցներով կազմել ածանցավոր բառեր.

գաղութ	իք
խաղ	ավոր
գույն	ական
ոտ	ալիք
կեղծ	ք

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. Ընդգծել այն բառը կամ բառակապակցությունը, որն արտահայտում է փակագծերում տրված բառի փոխաբերական իմաստը.

ա/ (փիղ) – անխելք, համառ, փնթի, հսկա

բ/ (ընձուղտ) – ստորաքարշ, դանդաղաշարժ, երկարավիզ, հնարամիտ

գ/ (արծիվ) – սրատես, երես առած, բարի, անբան

դ/ (գայլ) – դանդաղկոտ, խորամանկ, գիշատիչ, հավատարիմ

ե/ (աղավնի) – խաղաղության խորհրդանիշ, կամակոր, խարդախ, լեզվանի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Կապակցությունների իմաստը արտահայտել մեկ բառով.

ա/ Ջենք կրող _____

բ/ Կյանք տվող _____

գ/ Դամբարանի քար _____

դ/ Դատարկ ձեռքով _____

ե/ Բնությունը պահպանող _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Տրված իմաստների դիմաց գրել համանուն բառեր.

ա/ Անիվ _____

Ակունք _____

բ/ Ամիս _____

Կռիվ _____

գ/ Հարստություն _____

Հոգևոր երգ _____

դ/ Քարանձավ _____

Տղամարդ _____

ե/ Բույր _____

Ոչխարների խումբ _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Տեղադրել *բուրդ, բարդ, վարք, վարգ, վարկ* բառերը.

1. Տիկին Հայկուհին վաղ առավոտյան լվանում էր _____:
2. Նա շատ _____ ու հակասական բնավորություն ուներ:
3. Ձիու համաչափ ու գեղեցիկ _____ հիացրել էր բոլորին:
4. Տղան չափազանց կռվարար էր, և նրա _____ բոլորովին դուր չէր գալիս հարևաններին:
5. Բանկը _____ ժամանակին չմուծելու համար տուգանք էր սահմանել: